Բնապահպանական տեղեկատվության հիմնական աղբյուրների ցանկ

ՀՀ Ազգային ժողովի
Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողով
p. Երևան, 0095, Մարշալ Բաղրամյա պող. 19
Հեռ. (011) 513656, (011) 513342
Կայքի հասցե՝ www.parliament.am

ՀՀ կառավարություն
Տարածքային զարգացման և բնապահպանական վարչություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1,
Հեռ. (010) 515830
ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ. (010) 515840
Կայքի հասցե՝ www.gov.am

ՀՀ գլխավոր դատախազություն
p. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փ. 5
Հեռ. (010) 511650
Էլ. փոստ՝ info@genproc.am
Կայքի հասցե՝ www.genproc.am

ՀՀ բնապահպանության նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. (010) 521099
Էլ. փոստ՝ min_ecology@mnp.am
Կայքի հասցե՝ www.mnp.am

Բնապահպանական պետական տեսչություն
Հեռ. (010) 519103

Բնապահպանական պետական փորձաքննություն ՊՈԱԿ
p. Երևան, Կոմիտասի 29,
Հեռ. (010) 220218

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2
Հեռ. (010) 511302, 511303
Էլ. փոստ՝ mta@mta.gov.am, press@mta.gov.am
Կայքի հասցե՝ www.mta.gov.am

ՀՀ առողջապահության նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. (010) 582413
Կայքի հասցե՝ www.moh.am
Էլ. փոստ՝ minister@moh.am

ՀՀ ԱՆ պետական հիդրոօդերևութաբանական վարչություն
p. Երևան, Նորք-Մարաշ, Հովսեփյան փ. 10,
Հեռ. (010) 650305
Էլ. փոստ՝ ph@ph.am

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. (010) 6524641
Էլ. փոստ՝ naxarar@inbox.am
Կայքի հասցե՝ www.minagro.am

ՀՀ ԳՆ «Հայանտառ» ՊՈԱԿ
Հեռ. (010) 651738
Էլ. փոստ՝ arm_forest@yahoo.am

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. (010) 521964
Էլ. փոստ՝ minenergy@minenergy.am
Կայքի հասցե՝ www.minenergy.am

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
p. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. (010) 560381
Էլ. Փոստ՝ info@mud.am
Կայքի հասցե՝ www.mud.am

«Աջակցություն Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը, Օրհուս կենտրոնների և բնապահպանական քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների ձևավորմանն ու ուժեղացմանը»

ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՐԹԻԿ

«Որտեղից և ինչպես ստանալ բնապահպանական տեղեկատվություն»

2014

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
ՀՀ, p. Երևան, Չարենց 46, հեռ 011 81 85 93
Կամ այցելել www.aarhus.am կայք

Ինչո՞ւ է կարևոր իրազեկ լինել շրջակա միջավայրի հարցերին

Ընդամենը մի քանի տարի առաջ հասարակությունը չուներ տեղեկացված լինելու և որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու այնպիսի իրավունքներ և հնարավորություններ, ինչպիսիք ունի այսօր: Տեղեկատվության մատչելիությունը մարդու հիմնական իրավունքներից է, որն ամրագրված է միջազգային օրենսդրությամբ, ՀՀ Սահմանադրությամբ, առանձին օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով կամ կանոնակարգերով:

Ցանկացած երկրում բնապահպանական օրենսդրությունը արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ քաղաքացուն հասանելի է էկոլոգիական տեղեկատվությունը, և նա ունի շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերին մասնակցելու լիարժեք հնարավորություն:

Ի՞նչ է բնապահպանական տեղեկատվությունը

Բնապահպանական է համարվում այն տեղեկատվությունը, որը վերաբերում է շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակին և դրանց միջև փոխազդեցությանը, գործունեությանը կամ միջոցներին, որոնք ազդում են կամ ունակ են ազդել շրջակա միջավայրի տարրերի, ինչպես նաև մարդկանց առողջության և անվտանգության, կյանքի պայմանների և մշակույթի օբյեկտների վրա: Այդ տեղեկատվությունը կարող է լինել գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ որևէ այլ նյութական ձևով:

Որո՞նք են բնապահպանական տեղեկատվության աղբյուրներն ու տիրապետողները

Մի շարք պետական մարմիններ պարտավորություն են կրում հավաքագրել և պահպանել իրենց գործունեության հետ կապ ունեցող բնապահպանական տեղեկատվությունը:

Բնապահպանական տեղեկատվությունը պահվում է նաև այլ մարմիններում, հաստատություններում կամ մասնավոր ընկերություններում, որոնց գործունեության բնույթը շրջակա միջավայրի պահպանությունը չէ, բայց նրանք տիրապետում են շրջակա միջավայրի վրա ազդող կամ ազդելու հնարավորություն ունեցող գործունեության վերաբերյալ տեղեկատվության, նրանց վրա դրված են վարչական պարտականություններ և գործառույթներ կամ նրանք մատուցում են շրջակա միջավայրին վերաբերող ծառայություններ:

Բնապահպանական տեղեկատվություն ստանալու համար դիմելու կարգը

Համաձայն Օրհուսի համաձայնագրի 4-րդ հոդվածի, ցանկացած անձ՝ անկախ իր քաղաքացիությունից, երկրից և բնակվելու վայրից, տարիքից կամ սեռից, իրավունք ունի հարցում կատարել և ստանալ բնապահպանական տեղեկատվություն:

Ըստ ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածի պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

• Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, թե իրեն ինչո՞ւ է անհրաժեշտ տվյալ տեղեկությունը կամ ինչպե՞ս է պատրաստվում այն օգտագործել, այսինքն, բնապահպանական տեղեկատվությունը պետք է տրամադրվի առանց դրանց նկատմամբ հետաքրքրություն առաջացնող պատճառների ձևակերպման անհրաժեշտության,

• տեղեկատվությունը պետք է տրամադրվի այն ձևով, որով այն հարցվել է,

• պետական մարմինները պետք է ապահովեն տեղեկատվության հարցումների ստացումը այն մարմինների կողմից, որոնց դա վերաբերում է,

• բնապահպանական տեղեկատվությունը պետք է տրամադրվի ինչքան հնարավոր է սեղմ ժամկետներում (ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում),

• տեղեկատվություն ստանալու հարցման պատասխանի ժամկետի երկարաձգումը կամ տրամադրման մերժումը պետք է տրվի գրավոր ձևով և անպայման պետք է նշվեն պատճառները:

Տեղեկություն ստանալու հարցման մեջ պետք է հնարավորինս հստակ ձևակերպել անհրաժեշտ տեղեկությունը: Եթե պահանջում եք կոնկրետ փաստաթուղթ, ապա պետք է նշել բոլոր այն տվյալները, որ կան դրա վերաբերյալ:

Գրավոր հարցումը պետք է անպայման գրանցվի և պետք է տրվի գրանցման համարը: Այն պետք է պահել: Եթե ուղարկել եք պատվիրված նամակով, պետք է պահել անդորրագիրը և մի քանի օր անց զանգահարել ու ճշտել արդյոք մարմինը ստացել է հարցումը և որն է հարցման գրանցման համարը:

Ինչպե՞ս գրել տեղեկատվության ստացման լավ հարցում

• Բնապահպանական տեղեկատվություն ստանալու հարցումը ցանկալի է ներկայացնել գրավոր ձևով,

• գրության մեջ անպայման պետք է նշել, որ դա տեղեկատվություն ստանալու հարցում է, ամսաթիվը, գրության համարը և ո՞ւմ կողմից է կատարվում հարցումը,

• եթե հարցումը կատարում է կազմակերպությունը, ցանկալի է, որ այն գրվի պաշտոնական բլանկի վրա, ստորագրվի ղեկավարներից մեկի կողմից և կնիքվի,

• հարցման սկզբում անպայման պետք է հղում կատարել երկրի օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությանը, այն օրենքներին և հատկապես դրանց այն հոդվածներին ու կետերին, որոնք սահմանում են տեղեկատվություն ստանալու իրավունքը: Դա անհրաժեշտ է, որպեսզի պաշտոնյաներին մեկ անգամ ևս հիշեցնեք ձեր իրավունքների և տեղեկատվություն տրամադրելու նրանց պարտականությունների մասին:

• Պետք է հստակ և պարզ ձևակերպել, թե ի՞նչ տեղեկություններ եք ուզում ստանալ, նշել, թե կոնկրետ ո՞ր ժամանակահատվածին է վերաբերում այն, դա կօգնի հեշտությամբ գտնել և ձեզ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը,

• սահմանափակեք հարցումն իսկապես անհրաժեշտ տեղեկատվությամբ, մի հարցումով հնարավոր չէ տեղեկություններ ստանալ ամեն ինչի մասին,

• հարցման վերջում անպայման պետք է նշել, որ դուք պատրաստ եք տեղեկատվության պատճենահանման համար վճարել կամ տրամադրել որևէ կրիչ՝ էլեկտրոնային տարբերակով այն ստանալու համար: